6.Դատական ծախսեր.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի՝ Դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում՝ գրավոր միջնորդության տեսքով: Նման պահանջից հրաժարվելու կամ այդ կարգը չպահպանելու դեպքում դատական ծախսերի հատուցման հարցը համարվում է լուծված:

Նույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հայցվոր ընկերության կողմից ներկայացված հայցապահանջով վճարվել է պետական տուրքի գումար 100.000 ՀՀ դրամ:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9.5 կետով նախատեսված, գնման պայմանագրի միակողմանի լուծման հետ կապված վեճերով, պետական տուրքի է վճարվում բազային տուրքի 30-ապատիկի չափով:

Նկատի ունենալով, որ հայցը ենթակա է բավարարման և Հայցվորը խնդրել է նախապես վճարված պետական տուրքը բռնագանձել Պատասխանողից հօգուտ Հայցվորի, հետևաբար պետք է Պատասխանողից հօգուտ Հայցվորի բռնագանձել 30.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը;

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-194 հոդվածներով, դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

Հայցը բավարարել.

Անվավեր ճանաչել «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից վերջինիս և «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ-ի միջև 17.06.2024թվականին կնքված թիվ «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/56» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծման մասին 23.07.2024թ.-ի ծանուցումը:

«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ից հօգուտ «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ-ն բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանել մինչև վճռի կատարումը;

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ **Նաիրա Ավետիսյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am